# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ու Թ Յ Ու Ն թիվ 9

2012թ. դեկտեմբերի 20 -ին կայացած Երևանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի

*Օրակարգ.*

1. Հայցորդների և ասպիրանտների ատեստավորում:
   /Զեկ. ամբիոնի վարիչներ/
2. Գիտական հաղորդում:
3. Ընթացիկ հարցեր:

*1.*

ԼՍԵՑԻՆ – Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի վարիչ Վ.Բոյնագրյանի հաղորդումը ամբիոնի հայցորդ Աշխեն Հովհաննիսյանի ատեստավորման վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաշվի առնելով ատենախոսության թեմայի վերաբերյալ Աշխեն Հովհաննիսյանի կատարած գիտական աշխատանքները՝ նրան ատեստավորել:

ԼՍԵՑԻՆ - Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչ Թ.Վարդանյանի հաղորդումը ամբիոնի հեռակա ասպիրանտ Հրաչուհի Գալստյանի ատեստավորման վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաշվի առնելով, որ Հրաչուհի Գալստյանը հանձնել է առաջին տարվա համար նախատեսված բոլոր քննությունները, հավաքել և նախնական մշակման է ենթարկել թեմային վերաբերող գիտական աղբյուրները, վիճակագրական տվյալները, նրան ատեստավորել:

ԼՍԵՑԻՆ – Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչ Թ.Վարդանյանի հաղորդումը ամբիոնի հայցորդ Արփինե Գաբրիելյանի ատեստավորման վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաշվի առնելով, որ Արփինե Գաբրիելյանը հանձնել է երեք քննությունները, ունի երկու հրատարակված հոդված, ևս երկուսը ներկայացված են տպագրության, շարադրել է աշխատանքի մեծ մասը, նրան ատեստավորել:

ԼՍԵՑԻՆ – Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչ Թ.Վարդանյանի հաղորդումը ամբիոնի հայցորդ Հեղինե Կոստանյանի ատեստավորման վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաշվի առնելով, որ Հեղինե Կոստանյանը հանձնել է երեք քննությունները, տպագրության է ներկայացրել չորրորդ հոդվածը, իսկ աշխատանքը գտնվում է ամփոփման փուլում, նրան ատեստավորել:

ԼՍԵՑԻՆ - Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ Ա.Ավագյանի հաղորդումը ամբիոնի հայցորդ Լուսինե Հակոբյանի ատեստավորման վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաշվի առնելով, որ Լուսինե Հակոբյանը հրատարակել է երկու գիտական հոդված, պատրաստել է աշխատանքի առաջին գլուխը, նրան ատեստավորել:

ԼՍԵՑԻՆ - Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ Ա.Ավագյանի հաղորդումը ամբիոնի հայցորդ Կարինե Շախոյանի ատեստավորման վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաշվի առնելով, որ Կարինե Շախոյանի հրատարակել է երկու գիտական հոդված, պատրաստել է աշխատանքի երկու գլուխները և աշխատանք է տարվում 3-րդ գլխի թվային տվյալների վերլուծության ուղղությամբ, նրան ատեստավորել:

ԼՍԵՑԻՆ - Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ Ա.Ավագյանի հաղորդումը ամբիոնի հայցորդ Անի Քոչարյանի ատեստավորման վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաշվի առնելով, որ Անի Քոչարյանի հրատարակել է մեկ գիտական հոդված, նրան ատեստավորել:

ԼՍԵՑԻՆ - Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ Ա.Ավագյանի հաղորդումը ամբիոնի հայցորդ Մարգարիտա Աբրահամյանի ատեստավորման վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաշվի առնելով, որ Մարգարիտա Աբրահամյանը հրատարակել է մեկ գիտական հոդված, պատրաստել է աշխատանքի երկու գլուխները, նրան ատեստավորել:

ԼՍԵՑԻՆ - Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ Ա.Ավագյանի հաղորդումը ամբիոնի հայցորդ Լիլիթ Հակոբյանի ատեստավորման վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաշվի առնելով, որ Լիլիթ Հակոբյանը հրատարակել է մեկ գիտական հոդված, աշխատել է իր գիտական թեզի առաջին գլխի՝ տեսության և մեթոդաբանության վրա, հանձնել է ատեստավորման քննություններ փիլիսոփայությունից և անգլերեն լեզվից, ստուգարք՝ ինֆորմատիկայից, նրան ատեստավորել:

ԼՍԵՑԻՆ - Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ Ա.Ավագյանի հաղորդումը ամբիոնի հայցորդ Մարիամ Վասիլյանի ատեստավորման վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաշվի առնելով, որ Մարիամ Վասիլյանը հանձնել է ատեստավորման քննություն փիլիսոփայություն առարկայից և ստուգարք՝ ինֆորմատիկայից, տպագրության է ներկայացվել երկու գիտական հոդված, նրան ատեստավորել:

ԼՍԵՑԻՆ - Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ Ա.Ավագյանի հաղորդումը ամբիոնի հայցորդ Էլիզա Դուրգարյանի ատեստավորման վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաշվի առնելով, որ Էլիզա Դուրգարյանը հանձնել է մասնագիտական ատեստավորման քննությունը, հրատարակել է մեկ գիտական հոդված, աշխատանքը ամբողջությամբ պատրաստ է և ներկայացվել է ամբիոն, նրան ատեստավորել:

ԼՍԵՑԻՆ - Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ Ա.Ավագյանի հաղորդումը ամբիոնի հայցորդ Գայանե Հարությունյանի ատեստավորման վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաշվի առնելով, որ Գայանե Հարությունյանը հանձնել է մասնագիտական ատեստավորման քննությունը, հրատարակել է մեկ գիտական հոդված, աշխատանքը ամբողջությամբ պատրաստ է և ներկայացվել է ամբիոն, նրան ատեստավորել:

*2. ԳԻՏԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ*

ԼՍԵՑԻՆ – Երկրաֆիզիկայի ամբիոնի հայցորդ Ստեփան Ռոբերտի Մինասյանի զեկուցումը «Խոշոր ջրառների հետեվանքով միջավայրի երկրաէկոլոգիական պայմանների փոփոխությունների ուսումնասիրություն եվ կանխատեսում» վերնագրով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ:

Զեկուցողը մանրամասն կանգ առավ այն գիտական ձեռքբերումների վրա, որին նա հասել է ուսումնասիրությունների ժամանակ: Նա նշեց, որ աշխատանքի արդյունքները զեկուցվել են ամբիոնի նիստում, գիտական խորհրդի կողմից կազմակերպված սեմինարում:

Ելույթ ունեցան ամբիոնի պրոֆ. Վ.Վարդանյանը, դոց. Ա.Սարդարյանը, դոց. Գ.Մարկոսյանը, որոնք նշեցին, որ Ս.Մինասյանը կատարել է բավական ծավալուն աշխատանք, թեմայի վերաբերյալ ունի հրատարակած գիտական հոդվածներ: Աշխատանքում հեղինակը հստակ ներկայացրել է ատենախոսության նպատակը, խնդիրները, գիտական նորույթները և իր կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքները:

ՈՐՈՇԵՑԻՆ – Երկրաֆիզիկայի ամբիոնի հայցորդ Ստեփան Ռոբերտի Մինասյանի զեկուցումը «Խոշոր ջրառների հետեվանքով միջավայրի երկրաէկոլոգիական պայմանների փոփոխությունների ուսումնասիրություն եվ կանխատեսում» վերնագրով թեկնածուական ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության մասնագիտական խորհրդում, տրվեց համապատասխան եզրակացություն (եզրակացությունը կցվում է):

*3. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ*

ԼՍԵՑԻՆ – Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ Ա.Ավագյանի հաղորդումը Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի հայցորդ Անահիտ Գրիգորյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի հայցորդ Անահիտ Գրիգորյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Շիրակի մարզի զբոսաշրջության զարգացման և տարածքային կազմակերպման աշխարհագրական վերլուծությունը» վերնագրով, գիտական ղեկավար նշանակել աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Մաքսիմ Գառնիկի Մանասյանին:

ԼՍԵՑԻՆ – Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչ Թ.Վարդանյանի հաղորդումը ԼՂՀ Արցախի պետական համալսարանի «Ֆիզիկական աշխարհագրություն» մասնագիտությամբ ասպիրանտ Գոհար Յուրիկի Գրիգորյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ – ԼՂՀ Արցախի պետական համալսարանի «Ֆիզիկական աշխարհագրություն» մասնագիտությամբ ասպիրանտ Գոհար Յուրիկի Գրիգորյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «ԼՂՀ ագրոէկոհամակարգի բիոկլիմայական ներուժի գնահատումը» վերնագրով, գիտական ղեկավար նշանակել աշխ. գիտ. թեկնածու, դոցենտ Արսեն Թորգոմի Գրիգորյանին:

ԼՍԵՑԻՆ - Երկրաֆիզիկայի ամբիոնի հայցորդ Ս.Ռ.Մինասյանի հաղորդումը իր ԻԴ-04.01 ծածկագրով «Խոշոր ջրառների հետևանքով միջավայրի երկրաէկոլոգիական պայմանների փոփոխության ուսումնասիրում և կանխատեսում» վերնագրով ատենախոսության թեմայի ուղղությամբ կատարած աշխատանքի վերաբերյալ:

Զեկուցողը մանրամասն կանգ առավ այն բոլոր հարցերի վրա, որոնք արտացոլված են ատենախոսության թեմայի տարբեր բաժիններում:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաշվի առնելով կատարված աշխատանքները, երկրաֆիզիկայի ամբիոնի հայցորդ Ստեփան Ռոբերտի Մինասյանի «Խոշոր ջրառների հետևանքով միջավայրի երկրաէկոլոգիական պայմանների փոփոխության ուսումնասիրում և կանխատեսում» վերնագրով աշխատանքը երաշխավորել պաշտպանության մասնագիտական գիտական աստիճաններ շնորհող խորհրդում:

Որոշումն անցավ միաձայն:

ԼՍԵՑԻՆ – 01.01.2012թ.-15.01.2013թ. ժամանակաշրջանում 10-3ե ծածկագրով թեմայի (ղեկ. Մ.Ա.Գրիգորյան) ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 10-3ե ծածկագրով թեմայի ուղղությամբ կատարված աշխատանքները:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ.Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.Ս.ՍԱՐԴԱՐՅԱՆ